

Գործարար շահերի պաշտպանության ցանցի տեղեկատու

Իրադարձություններ/Նորություններ/Հոդվածներ/Օրենսդրական փոփոխություններ

ԻՐԱԳԱՐՉՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության համաժողովի կազմկոմիտեի 3-րդ նիստի արդյունքները

Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության համաժողովի կազմկոմիտեն իր հերթական՝ 3-րդ նիստում ընտրել է 220 ՀԿ-ներ (այդ թվում՝ 23-ը Հայաստանից) ս.թ նոյեմբերի 18-19-ը Բեռլինում կայանալիք քաղաքացիական հասարակության համաժողովին մասնակցելու համար: Ընտրված 220 կազմակերպություններից միայն 60-ն են Եվրամիության անդամ երկրներից: Ընտրությունը կատարվել է Արևելյան գործընկերության և Եվրոպական երկրներից ստացված հազարավոր հայտատուներից:



Հայաստանի Հասարակական կազմակերպությունները մասնակցել են Ռիգայում կազմակերպված ուսումնական այցելության (Study Visit) ծրագրին

«Տեղական ժողովրդավարական գործակալությունների ասոցիացիան» (Association for local democracy agencies/ALDA,) Կրթության զարգացման ակադեմիայի (AED) հետ համատեղ կազմակերպել էր իր երկրորդ ուսումնական այցելության ծրագիրը ՀԿ-ների համար: Օգոստոսի 7-14-ը հայաստանյան ՀԿ-ների ներկայացուցիչները այցելել են Լատվիայի իրենց գործընկեր ՀԿ-ներին: Ծրագրին օժանդակել էր նաև «Լատվիայի Համայնքների ասոցիացիան», հնարավորություն ընձեռելով մասնակիցներին ծանոթանալու Լատվիայում «պետություն-քաղաքացիական հասարակություն» երկխոսության գործընթացին:

ALDA-ն միջազգային ոչ պետական կազմակերպություն է, որն ակտիվորեն աշխատում է մարդու իրավունքների և տեղական ժողովրդավարության զարգացման ասպարեզում:

Հիմնադրվելով 1999թ. որպես Եվրախորհրդի տեղական և տարածքային կառավարման մարմինների կոնգրեսի փոքր նախաձեռնություն՝ համակարգելու համար արդեն իսկ 1993թ. ստեղծված տեղական ժողովրդավարական գործակալությունների (LDA) ցանցը, ALDA-ն այսօր ամենամեծ և կարևորագույն ՀԿ-ներից է, որը կապում է Եվրոպական կտիվ քաղաքացիության ծրագրում ընդգրկված տեղական կառավարման մարմիններին և քաղաքացիական հասարակությանը:

ALDA-ն ունի ավելի քան 160 անդամ՝ ընտրված ինչպես տեղական և տարածքային կառավարման մարմիններից, այնպես էլ փոքր, ոչ պետական ՀԿ-ներից, որոնք գործում են մարդու իրավունքների, տեղական ժողովրդավարության և ակտիվ քաղաքացիության ասպարեզներում:

ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Արևելյան գործընկերության քաղաքացիական հասարակության համաժողովի կազմկոմիտեի 3-րդ նիստի արդյունքները

Հայաստանի ՀԿ-ները մասնակցել են Ռիգայում կազմակերպված ուսումնական այցելության (Study Visit) ծրագրին

Հայաստանում 2011թ-ից կիրականացվի «Գյուղական կարողությունների ստեղծման ծրագիր»

«DigiTec Expo 2010» ամենամյա ցուցահանդես՝ Երեւանում

«ARMENIA EXPO 2010» տասներորդ ունիվերսալ տարածաշրջանային առևտրաարդյունաբերական ցուցահանդեսային ֆորումը՝ Երեւանում

Երեւանում 2011թ-ին կբացվի «Dalma Garden Mall» առևտրի եւ զվարճանքի ամենամեծ կենտրոնը

Փոփոխություններ՝ «ՀՀ աշխատանքային օրենսգրքում»

Հայաստանի հարկատուների տվյալները հրապարակվելու են ինտերնետում

Կտավարության հավանությանն է արժանացել «Հարկերի մասին»:

«Շահութահարկի մասին» և ևս 14 ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու օրենքների նախագծերի փաթեթը

12 սպահովագրական ընկերություններ համագործակցում են օտարերկրյա ավելի քան 50 վերասպահովագրողների հետ

Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր սպահովագրություն Հայաստանում

Հայաստանում 2011թվականից կիրականացվի «Գյուղական կարողությունների ստեղծման ծրագիրը» ՀՀ գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի վերլուծության և կոորդինացման պետական հիմնարկի կողմից:

Ծրագրով նախատեսվում են գյուղական աղքատության և մարզերի սոցիալ-տնտեսական զարգացման անհավասարությունների հաղթահարմանն ուղղված իրական քայլեր, որոնք կխթանեն մանր ֆերմերների աշխատանքը, կլուծեն սեփական հողակտորից դուրս գյուղական սահմանափակ ու ցածր վարձատրվող աշխատատեղերի բարելավման, ինչպես նաև ոչ գյուղատնտեսական աշխատատեղերի ստեղծման ու զարգացման խնդիրը:

Ինչպես «Արմենպրես»-ին հայտնեցին Հայաստանի գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերի վերլուծության և կոորդինացման պետական հիմնարկից, ծրագրի հիմնական նպատակն է արտահանողների համար մատչելի դարձնել առկա կամ հնարավոր արտահանման հնարավորությունները, աջակցել արտադրողներին, վերամշակողներին՝ գյուղատնտեսության և հարակից ոլորտներում նոր տեխնոլոգիաների ներդրման, արտադրանքի որակը, քանակը, մրցունակությունն ապահովելու հարցում:

Ծրագիրը նաև ուղղված է գյուղական համայնքներում աղքատության վերացմանը: Վերջինիս հայեցակարգը հաստատվել է 2009թ-ին: Ծրագրի հիմնական նորարարությունը «Հայկական միրգ» կազմակերպության հիմնադրումն է՝ որպես միջազգային չափորոշիչներին համապատասխան կառույց:

08.20.2010
ԱՐՄԵՆՊՐԵՍ

«DigiTec Expo 2010» ամենամյա ցուցահանդես՝ Երևանում

Երևանի Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում հոկտեմբերի 29-31-ը կանցկացվի «DigiTec Expo 2010» ամենամյա 6-րդ ցուցահանդեսը, որը տեղեկատվական և հեռահաղորդակցության տեխնոլոգիաների (ՏՀՏ) ոլորտի տարվա առանցքային իրադարձությունն է: Ինչպես «Արմենպրես»-ին տեղեկացրեցին Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միությունից, «DigiTec Expo»-ի շրջանակներում կիրականացվեն մի շարք հարակից միջոցառումներ:

Մասնավորապես՝ կկազմակերպվի «DigiTec Տեխնոլոգիական ֆորում»-ը՝ համահայկական ինժեներական համաժողովը, որին ակնկալվում է հայաստանյան և սփյուռքի շուրջ 1500 ինժեներների մասնակցություն: «DigiTec Start Up» համաժողովի ընթացքում նորաստեղծ ընկերությունները կներկայացնեն իրենց ծառայությունները և գործունեությունը, էլեկտրոնային կառավարում համաժողովում կցուցադրվեն ՀՀ կառավարությանն առընթեր մարմինների էլեկտրոնային ծառայությունները:

Կանցկացվի նաև «DigiLife» սեմինարների շարք, համակարգչային խաղեր նախագծողների Հայաստանի բաց առաջնություն, «Երևան՝ գիտության փառատուն»: Իսկ ահա «Արմոռոտիքս» Հայաստանի ռոբոտների բաց առաջնության հիմնական նպատակը բարձր տեխնոլոգիաների ընկերությունների, գործարար սպառողների և հասարակության միջև հաղորդակցման բարենպաստ միջավայր ստեղծելն է:

Բացի այդ, ցուցահանդեսը հայաստանյան ՏՀՏ դաշտի իրական պատկերն ուսումնասիրելու, ընկալելու, ձեռքբերումներին ծանոթանալու, առկա մարտահրավերներն ու հնարավորությունները տեսնելու հնարավորություն է տալիս: Այն նաև միտված է միջազգային կապերի ընդլայնմանը: «DigiTec Expo»-ն նաև մի շարք կարևոր խնդիրներ է լուծում. նախ՝ Հայաստանը դրսում ներկայացվում է որպես բարձր տեխնոլոգիական իրադարձությունների երկիր, բացի այդ, ցուցահանդեսն ունի նաև ներդրումների ներգրավման նպատակ. արտասահմանյան ներդրողները կարող են այստեղ միանգամից ծանոթանալ ամբողջ ՏՏ համայնքին և հետագա ծրագրեր նախանշել:

Ցուցահանդեսի պաշտոնական հովանավորն է «Maxtronic» ընկերությունը: Միջոցառմանն իրենց ակտիվ մասնակցության մասին արդեն հայտնել են «National Instruments», «Synopsis», «Ucom», «Intracom», «I-con», «Unicomp», «EIF», «Nork», «Araga», «Instigate», «GNC», «Softline», «Scancode», «Lanar», «Credence», «YETRI» և մի շարք այլ ընկերություններ: Առաջին անգամ այս տարի ցուցահանդեսին կմասնակցի նաև գերմանական «Krohne» ընկերությունը: Ակնկալվում է, որ ցուցահանդեսը կունենա 15 հազ. այցելու և 60 մասնակից ընկերություն:

08.20.2010
ԱՐՄԵՆՊՐԵՍ

«ARMENIA EXPO 2010» տասներորդ ունիվերսալ տարածաշրջանային առևտրաարդյունաբերական ցուցահանդեսային ֆորումը՝ Երևանում

Երևանի Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում սեպտեմբերի 3-5-ը կանցկացվի «ARMENIA EXPO 2010» տասներորդ ունիվերսալ տարածաշրջանային առևտրաարդյունաբերական ցուցահանդեսային ֆորումը: Վերջինիս կազմակերպիչներն են «LOGOS EXPO Center» ցուցահանդեսային ընկերությունը և Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միությունը: Ցուցահանդեսի նպատակն է որոնել իրացման նոր շուկաներ, Հայաստանի տնտեսության մեջ ներգրավել օտարերկրյա ներդրումներ, ներկայացնել Հայաստանի տնտեսական ներուժը:

Ինչպես «Արմենպրես»-ին տեղեկացրին «LOGOS EXPO Center» ընկերությունից, ցուցահանդեսը համարվում է ամենախոշորը տարածաշրջանում և ընդգրկում է գրեթե բոլոր ոլորտները: Ցուցահանդեսին կմասնակցեն ավելի քան 150 տեղական և օտարերկրյա կազմակերպություններ, ընկերություններ և միություններ՝ Հայաստանից, Լեռնային Ղարաբաղից, Ռուսաստանից, Բելառուսից, Իրանից, Արաբական Միացյալ Էմիրություններից, Գերմանիայից, Վրաստանից, Թուրքիայից, Չինաստանից, Լեհաստանից, Իտալիայից:

Ցուցահանդեսը հնարավորություն է տալիս առանց երկրից դուրս գալու, կարճ ժամանակահատվածում ձեռք բերել գործնական կապեր և ներգրավել արտերկրյա խոշոր ներդրումներ սեփական բիզնեսի զարգացման համար: «ARMENIA EXPO 2010» ցուցահանդեսի պաշտոնական տեղեկագիրքը կիրատարակվի անգլերենով և ռուսերենով և կբաշխվի աշխարհի ավելի քան հիսուն երկրներում: Բացման պաշտոնական արարողությանը ներկա կլինեն ՀՀ վարչապետը, ՀՀ կառավարության անդամները, դեսպաններ, հյուպատոսներ, միջազգային և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

08.20.2010
ԱՐՄԵՆՊՐԵՍ

Երևանում 2011թ-ի օգոստոսին կրացվի «Dalma Garden Mall» առևտրի եւ զվարճանքի ամենամեծ կենտրոնը: Ինչպես «Արմենարես»-ի հետ գրույցում նշեց «Dalma Invest» ընկերության մարքեթինգի գծով մենեջեր Վահագն Գետրոյանը, կենտրոնի շինարարական աշխատանքներն ընթանում են նախատեսված ժամանակացույցի համաձայն, աշխարհում մեծ վարկանիշ ունեցող ընկերությունների հետ պայմանագրերի կնքման գործընթացը շարունակվում է:

«Գլավնայի այգիներ» միկրոշրջանում տեղակայված բազմաֆունկցիոնալ երկհարկանի կենտրոնի ընդհանուր տարածքը 43 հազար 500 քառակուսի մետր է, որից 32 հազար 600 քմ-ն առևտրի համար է նախատեսված: Կենտրոնը կունենա նաև 742 մեքենայի համար նախատեսված ավտոկայանատեղի: «Dalma Garden Mall»-ն իր մեջ համախմբելու է մթերային հիպերմարկետներ, վաճառատնային, ռեստորաններ, արագ սնունդի կետեր, բանկեր, տուրիստական գործակալություններ, շինանյութի խանութներ, կահույքի սրահներ, երեք սրահ ունեցող կինոթատրոն, բուլինգի սրահ, ինտերնետ-սրճարան, ինչպես նաև ժամանցի գոտի երեխաների համար: Առևտրի եւ զվարճանքի կենտրոնում հնարավոր կլինի կազմակերպել նաև ցուցահանդեսներ, ներկայացումներ, համերգներ:

08.20.2010
ԱՐՄԵՆՊՐԵՍ

Փոփոխություններ՝ «ՀՀ աշխատանքային օրենսգրքում»

Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգիրքը փոփոխված տարբերակով ուժի մեջ է մտել 2010 թ-ի օգոստոսի 7-ից: Գրանում տեղ են գտել մի շարք սկզբունքային փոփոխություններ: Ինչպես այսօր լրագրողների հետ հանդիպման ժամանակ նշեց ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության աշխատանքի եւ զբաղվածության վարչության պետ Թադևոս Ավետիսյանը, արդեն կիրառվում է աշխատանքային հարաբերությունների ծագման երկու հիմնական ձև՝ գրավոր աշխատանքային պայմանագիր եւ գործատուի ու աշխատողի համաձայնությամբ անհատական իրավական ակտ:

Վերջինս գործատուի կողմից ընդունված ակտ է, եւ դրանով ցանկացած պարագայում աշխատողը կարող է իր իրավունքները պաշտպանել: Բանավոր աշխատանքային պայմանագիր գոյություն չունի. դա ներառված է եղել օրենսգրքի փոփոխման նախագծում, սակայն չի ընդունվել: Թ. Ավետիսյանի խոսքով, մյուս սկզբունքային փոփոխությունը վերաբերում է աշխատանքային պայմանագրի ժամկետներին:

«Նախկինում որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրի համար կար հինգ տարի առավելագույն ժամկետ, բայց իրավակիրառական պրակտիկան եւ միջազգային փորձը ցույց են տալիս, որ մնան սահմանափակման անհրաժեշտություն չկա, եւ դա ուղղակի խոչընդոտում է աշխատանքային հարաբերությունները, ուստի այդ հինգ տարով սահմանափակումը հանվել է, եւ այսօր որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագրերը կարող են կնքվել մինչեւ որոշակի օրացուցային օր կամ տարի, որոշակի իրադարձության կամ գործողության ավարտ», - նշեց բանախոսը: Ըստ նրա՝ սրա հիմքում նաև միջազգային պրակտիկան է եւ միջազգային կարգավորման չափանիշները:

Հաջորդ փոփոխությունը ծանուցման ժամկետներին է վերաբերում, այսինքն՝ աշխատանքի էական պայմանների փոփոխության եւ աշխատանքային հարաբերությունների դադարեցման դեպքում ծանուցման ժամկետների հիմքում այլևս դրված է աշխատողի աշխատանքային ստաժը տվյալ գործատուի մոտ: Թ. Ավետիսյանի խոսքով, մյուս փոփոխությունը կապված է արտաժամյա եւ գիշերային աշխատանքի կազմակերպման սկզբունքների հետ: Ներկայումս արտաժամյա աշխատանքը սահմանվում է միայն գործատուի նախաձեռնությամբ:

«Արտաժամյա աշխատանքի պարագայում պետք է տրվի հավելյալ աշխատավարձ. ներկայումս հավելման նվազագույն չափ է սահմանված 50 տոկոսը: Տարվա համար արտաժամյա աշխատանքի համար առավելագույնը սահմանված է 180 ժամը: Գրանից ավելի գործատուն չի կարող աշխատողին ներգրավել արտաժամյա աշխատանքում, իսկ մնան պարագայում պարտավոր է վճարել», - շեշտեց Թ. Ավետիսյանը:

Ըստ նրա՝ նոր աշխատանքային օրենսգրքով գործատուն աշխատողների համար պարտավոր է սահմանել հնգօրյա աշխատանքային ռեժիմ, բացառությամբ՝ հանրակրթության ոլորտը: Աշխատողը վեցերորդ օրը աշխատելու պարագայում պետք է վճարվի կրկնակի եւ հավելում՝ 30 տոկոսով: Այս դրույթները չկիրառելու պարագայում գործատուն խիստ պատասխանատվության կենթարկվի: Թ. Ավետիսյանի խոսքով, նախատեսվում է ամենամյա արձակուրդի տեղափոխման համար սահմանափակում, որը նախկինում չկար:

«Այսօր գործող պրակտիկայում կան աշխատողներ, որոնք ունեն մինչեւ 10 տարվա չօգտագործված արձակուրդի որոշակի օրեր, եւ դրանից խուսափելու համար օրենսդրությամբ սահմանվել է 18 ամսվա շեմ, որի պարագայում այդ իրավունքը պետք է իրացված լինի:

Օրինակ՝ աշխատողը իր 2009թ-ի արձակուրդը պետք է իրացնի մինչեւ 2011թ-ի հունիս», - ընդգծեց Թ. Ավետիսյանը: Նրա խոսքով, գործատուի մեղքով ժամկետների խախտումով վճարված աշխատավարձի դեպքում գործատուի համար նախատեսվում է տուգանք՝ հօգուտ աշխատողի: «Սա աշխատավարձերի ուշացումը կանխարգելելու նպատակ է հետապնդում, նաև՝ ենթադրվող վնասների փոխհատուցում», - ասաց Թ. Ավետիսյանը:

08.19.2010
ԱՐՄԵՆՊՐԵՍ

Հայաստանի հարկատուների տվյալները հրապարակվելու են ինտերնետում

Փոփոխություններ կատարելով իր նախկին որոշումներից մեկում, գործադիրը սահմանել է, որ հարկ վճարողների (ապահովադիրների) վերաբերյալ տվյալները հրապարակվեն միայն հարկային մարմնի ինտերնետային կայքում տեղադրելու միջոցով՝ ձեռնպահ մնալով մամուլում հրապարակելուց: Նկատի է առնվել վերջին տարիներին ինտերնետային հասանելիության մակարդակի էական բարձրացումը, ինչպես նաև այն, որ այդ ճանապարհով տարեկան կտնտեսվի 8-10 մլն դրամ: Մեկ այլ որոշմամբ կառավարությունը ԿԱ ՊԵԿ մաքսային ծառայությունում գործող էլեկտրոնային կառավարման համակարգի արդիականացման եւ մաքսային ձևակերպման գործընթացում էլեկտրոնային վճարման մոդուլի ներդրման հետ կապված համակարգչային սարքավորումների եւ ծրագրային փաթեթների ձեռքբերման նպատակով պետեկամուտների կոմիտեին հատկացրել է 48726.9 հազար դրամ: Եվս 49910.0 հազար դրամ է հատկացվել հարկային ստորաբաժանումներում, մաքսակետերում եւ մաքսատներում տերմինալների տեղադրման, ծրագրային ապահովման եւ սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով:

08.19.10
gov.am

Գործադիրը հավանության է արժանացրել «Հարկերի մասին», «Շահութահարկի մասին» և ևս 14 ՀՀ օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու օրենքների նախագծերի փաթեթը, որի կարգավորման առարկան հարկային հաշվառման հստակեցումն ու պարզեցումն է: Ակնկալվում է, որ փաթեթի ընդունման դեպքում կկանոնակարգվեն անձնական հաշվի քարտերի էլեկտրոնային վարման և հարկային հաշիվների էլեկտրոնային կիրառման առնչությամբ ծագած հարցերը: Գործադիրը հավանությունն ստացած «Շահութահարկի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին» օրինագծի կարգավորման առարկան պարտադիր սոցիալական ապահովության վճարի գծով ստացված արտոնությունների գումարներն են: Ակնկալվում է, որ հարկ վճարողների համար կստեղծվեն պետության կողմից տրամադրվող արտոնություններից օգտվելու առավել ամբողջական հնարավորություններ:

08.19.10
gov.am

ՀՀ 12 ապահովագրական ընկերություններ համագործակցում են օտարերկրյա ավելի քան 50 վերաապահովագրողների հետ

Հայաստանյան 12 ապահովագրական ընկերությունները համագործակցում են օտարերկրյա ավելի քան 50 վերաապահովագրողների հետ: Ինչպես տեղեկացրին Հայաստանի կենտրոնական բանկի հասարակայնության հետ կապերի ծառայությունից, դրանք հիմնականում բարձր վարկանիշ ունեցող ընկերություններ են: Ապահովագրողն իրավունք ունի վերաապահովագրել ապահովագրական ռիսկերը, ինչպես Հայաստանի Հանրապետության տարածքում, այնպես էլ նրա սահմաններից դուրս: Հայաստանում որեւէ վերաապահովագրական ընկերություն գրանցված կամ լիցենզավորված չէ:

Այդ փաստը բացատրվում է շուկայի փոքր մասշտաբներով: Նշենք, որ վերաապահովագրությունը մեկ ապահովագրողի կողմից, պայմանագրով որոշված պայմաններով, ապահովագրողի նկատմամբ ունեցած իր ամբողջ պարտավորությունների կամ դրա մի մասի կատարման ռիսկի ապահովագրումն է այլ ապահովագրողի մոտ: Ընթացիկ տարվա առաջին կիսամյակում հաշվեգրված ապագովագրավճարների 50.7 տոկոսը վերաապահովագրողների մասնաբաժինն է, միեւնոյն ժամանակ, ապահովագրական գումարների 85.6 տոկոսը վերաապահովագրված է:

08.19.10
ԱՐՄԵՆՊՐԵՍ

Հայաստանում 2011-ի հունվարի 1-ից կիրականացվի ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն

Համաձայն Ազգային ժողովի կողմից այս տարի ընդունված «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքի՝ պարտադիր ապահովագրման ենթակա կլինի հանրապետությունում հաշվառված, ինչպես նաև ՀՀ տարածք վարելու միջոցով ներմուծվող ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվությունը երրորդ անձանց (տուժող կողմ) նկատմամբ: Այդ նպատակով ավտոտրանսպորտային միջոցների սեփականատերերի հետ կկնքվի ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության (ԱՊՊԱ) պայմանագիր՝ մեկ տարի ժամկետով, որտեղ պարտադիր կնքվի ավտոտրանսպորտային միջոցը վարելու լիազորություն ունեցող անձանց (ապահովագրված անձինք) ցանկը:

Մինչև 2011-ի հունվարի 1-ը կնքված ԱՊՊԱ պայմանագրերն ուժի մեջ կմտնեն 2011-ի հունվարի 1-ից: Ապահովագրիչները սահմանված կարգով կվճարեն ապահովագրավճարներ: ԱՊՊԱ ներքո հատուցման ենթակա կլինեն միայն ՀՀ տարածքում տեղի ունեցած ապահովագրական պատահարների հետևանքով առաջացած վնասները: Ի տարբերություն կամավոր ապահովագրության՝ պարտադիր ապահովագրությունը ապահովագրողի կամքից անկախ ապահովագրողի հետ օրենքի ուժով ծագող հարաբերությունն է, որի տեսակները, պայմաններն ու անցկացման կարգը կարգավորվում են օրենքով: Անդրադառնալով ներկայումս ՀՀ-ում արդեն իսկ գործող պարտադիր ապահովագրության տեսակներին՝ նշվում է, որ առանձնապես վտանգավոր արտադրական օբյեկտներ շահագործող անձը պարտավոր է իր գործունեության ամբողջ ժամանակահատվածում պարտադիր կերպով ապահովագրել նման օբյեկտների շահագործման ընթացքում աշխատող անձանց կյանքին, առողջությանը, գույքին, նաև աշխատանքների արդյունքում քաղաքացիների կյանքին, առողջությանը եւ գույքին, շրջակա միջավայրին պատճառած վնասները: Այժմ ՀՀ-ում գործում են «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքը, որն ընդունվել է 2005-ին եւ ուժի մեջ է մտել 2006 թ-ից: ՀՀ-ում նշված ոլորտների պարտադիր ապահովագրությունը կարգավորվում է այս օրենքի «Առանձնապես վտանգավոր արտադրական օբյեկտների պարտադիր ապահովագրումը» 20-րդ հոդվածի համաձայն:

Ներկա դրությամբ ՀՀ-ում չկան պարտադիր ապահովագրության այլ տեսակներ: ՀՀ-ում կան նաև մասնակի պարտադիր ապահովագրության տեսակներ, մասնավորապես՝ «Նոտարիատի մասին օրենքով» պարտադիր ապահովագրվում է նոտարների պատասխանատվության ռիսկը, «Ոստիկանության մասին օրենքով»՝ ոստիկանության ծառայողների կյանքը, «Փրկարար ուժերի եւ փրկարարների կարգավիճակի մասին օրենքով»՝ փրկարարների կյանքը եւ առողջությունը, «Ապահովագրության եւ ապահովագրական գործունեության մասին օրենքով»՝ ապահովագրական միջնորդների պատասխանատվության ռիսկը:

08-18. 2010
ԱՐՄԵՆՊՐԵՍ



Օտարերկրյա Ներդրումների եւ Համագործակցության
Ասոցիացիա



Մասնավոր Ձեռներեցության Միջազգային Կենտրոն
(ԱՄՆ)